ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ

(Մեծանուն հայրենասեր հայագետի նիշատակին.
Նրա մահվան 10-ամյակի առթիվ)

Լկներև է, թե որքան դժվար է «հուշիկ»-ի ձևով գրված երկտողում խոսել եկեղեցական-հասարակական, դպրոցական-կրթական և գրական-գիտական ասպարեզներում մեծ անուն հանած այնպիսի անձնավորության մասին, ինչպիսին էր բոլորից հավասարապես սիրված և հարգված Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցը։

Ո՞վ չի հիշում եռանդով լի Գարեգին վարդապետին, իբրև տեսչի, վերատեսչի և դասախոսի Գևորգյան ճեմարանի, խմբագրի և աշխատակցի «Արարատ» ամսագրի, զուգընթաց և «Շողակաթ» ժողովածուի, վանահոր Ս. Հռիփսիմեի վանքի և դեկավարի բազմաթիվ հնագիտական-արվեստագիտական արշավախմբերի «ի ծագաց մինչև ի ծագս» Հայաստան աշխարհի և նույնիսկ Հայաստանից դուրս շատ հեռուները, մինչև Երուսաղեմ և այլուր։

Ահա այսպիսով էր ժամանակի պայմաններում համեստ վանականը՝ կապված հայագիտական աշխարհի հետ։

Եվ միաժամանակ, տեղին էր մի տեսակ խուլ դժգոհություն, երբ «մտքից չմոռացված», բայց «աչքից հեռացած» նույն համեստ գործչին դիճակվեց իր կյանքի վերջին երկու տասնամյակներում պաշտոնավարել իր ջերմ սիրած Հայրենիքից դուրս, այսինքն չհաշված Նոր-Նախիջևանում առաջնորդության տարիները (1927—1933), իբրև հայրապետական նվիրակ Սփյուռքում (1933—1938), առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի (1938—1944) և, վերջապես, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (1945—1952)։

Սակայն երբ հայացք ենք ձգում Գարեգին Ա Վեհի տպագիր աշխատությունների ցանկի թե ցուցակի վրա, ձեզ ապշեցնում է նրանց լայն դիապազոնը։ Պատկերացրե՛ք հայագիտական մի քանի տասնյակ հոյակապ և փոքր գործեր, որոնք Նյու-Յորքի, Փարիզի, Երուսաղեմի, Հալեպի, Անթիլիասի, Բեյրութի և այլ վայրերի կնիքներն են կրում։ Եվ դեռևս որքա՜ն անտիպ գրքեր, հոդվածներ և, որ գլխավորն է, մանրանկարչական, լուսանկարչական և չափագրական նյութեր, հարստություններ...։

***

Իմ ծանոթությունը Գարեգին վարդապետի հետ, եթե կարելի է այսպես ասել «հեռակայորեն», սկիզբ է առնում 1911 թվականի դեկտեմբերից, երբ ես, իբրև Օդեսայի համալսարանի Գ կուրսի ուսանող, ժամկետից երկու տարի առաջ մշակեցի ավարտական շարադրությունս իրավաբանական ֆակուլտետի գծով (քանի որ զուգընթացաբար ունկընդրում էի և պատմա-բանասիրական ֆակուլտետի դասախոսություններին), նույնիսկ ներկայացրի այն տպագիր ձևով։ Աշխատությանս նյութն էր «Հայոց Մայրագույն Պատրիարքի իրավաբանական կացությունը. համառոտ դոգմատիկ տեսություն» (ռուսերեն, Օդեսա, 1911, 38 էջ)։

Քանի որ այդ աշխատությունը գրելիս ես բավականաչափ օգտագործել էի Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի (նախկին պատրիարքի) և Գարեգին վարդապետ Հովսեփյանցի համապատասխան գործերը, որ հիշատակել էի գրքիս վերջաբանում (էջ 38), պարտք համարեցի մի-մի օրինակ գրքիցս ուղարկել հիշյալ հեղինակներին պատշաճ

մակագրությամբ։ Շուտով երկուից էլ ստացա հավանության նշան կրող պատասխանները։ Մասնավորապես, Գարեգին վարդապետը նշում էր մի-երկու չնչին թերություն գրքույկիս մեջ, փափագ հայտնելով անձամբ տեսնել ինձ Էջմիածնում։

Գարեգին վարդապետը, ըստ երևույթին, ենթադրել էր, որ ես Էջմիածնում եղած չեմ. մինչդեռ աշակերտական տարիներին (1899—1908) ես այցելած էի Անդրկովկասի տեսարժան վայրերը և, ի միջի այլոց, Էջմիածին—Երևանը, Ղարսն ու Ցորագետը՝ 1903 թվականին, ապա Անին և կրկին Ղարսը՝ 1907 թվականին։

***

Հենց նույն աշակերտական տարիներին ես քանիցս տեսել էի Գարեգին վարդապետին Թիֆլիսում։

Այսպես, 1901 թվականի սեպտեմբերին Թիֆլիսում մեծ հանդիսավորությամբ տոնվեց Վրաստանի՝ Ռուսաստանին միանալու 100-ամյակը, որի կապակցությամբ Թիֆլիսում կազմակերպվել էր այսպես կոչված «Կովկասյան հոբելյանական ցուցահանդեսը»։ Հանդիսությանց ներկա գտնվելու համար Թիֆլիս էր ժամանել Ամենայն Հայոց Մկրտիչ Ա Կաթողիկոսը, որը բարեհաճեց դիտել, ի միջի այլոց, և հիշյալ ցուցահանդեսը։ Եվ ահա մի գեղեցիկ օր, երբ մեր ընտանիքը պատում էր ցուցահանդեսի վայրում, որը գտնվում էր այժմյան «Դինամո» կոչված ստադիոնի տեղում (Դիդուբե թաղամասի սկզբում), ընկավ իրարանցում... Պատճա՞ռը։ Խրիմյան Հայրիկի ներկայությունը ցուցահանդեսում շրջապատված բազմանդամ շքախմբով, որը բաղկացած էր Սահակ եպիսկոպոս Այվազյանից և չորս վարդապետներից, որոնցից մեկն էր Գարեգին վարդապետ Հովսեփյանցը։

Ի գեպ, նշենք, որ Գարեգին վարդապետի ներկայությունը Թիֆլիսում պայմանավորված էր նրանով, որ նա այն ժամանակ Վրաստանի և Իմերեթի, այսինքն Թիֆլիսի թեմի առաջնորդական ժամանակավոր փոխանորդն էր։

1902 թվականին Գարեգին վարդապետը մասնակցեց Թիֆլիսի Վանքի Մայր Եկեղեցու օծման արարողության (երկարատև վերանորոգումից հետո), որը կատարեց թեմական Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանը։ Գարեգին վարդապետը հանդես եկավ հուզիչ ատենաբանությամբ, նվիրված Էջմիածնի դերին հայոց պատմության մեջ։ Սակայն աչքի էր ընկնում մի արտասովոր հանգամանք, այն է, որ նա խոսում էր՝ առջևից ունենալով գրակալ, մեծ ոգևորությամբ ու շարժուձևերով, երբեմն ֆարաջայի երկար ու լայն թևքերը ծալելով, կարծես թե պրոֆեսորն էր դասախոսում համալսարանի ամբիոնից։

Թիֆլիսում միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո ինձ վիճակվեց ճանապարհորդել արտասահման, հատկապես Գերմանիա, և մնալ մի առժամանակ Լայպցիգ և Հալլե քաղաքներում։ Ի միջի այլոց, եղա և այն ընտանիքում, որտեղ ապրել էր Գարեգին սարկավագ Հովսեփյանցը, Լայպցիգի համալսարանի ուսանողը։ Սակայն որքան մեծ էր իմ ուրախությունը, երբ ինձ հաջողվեց հավաքել Լայպցիգում տպված հայ երիտասարդների գրեթե բոլոր դոկտորական դիսերտացիաները՝ Արշակ Տեր-Միքելյանի (1892), Կարապետ Տեր-Մկրտչյանի (1893), Հակոբ Մանանդյանի (1897), Գարեգին Հովսեփյանցի (1897), Մանուկ Աբեղյանի (1899) և, վերջապես, Երվանդ Տեր-Մինասյանի (1904), որոնցից Գարեգին սարկավագինը նվիրված էր «միակամեայց» խնդրին՝ «Die Ertstehungsgeschichte des Monothellsmus nach ihren Quellengepruft und dargestellt», von Dr. G. Owseplan, Archidiaconus in Etschmiadzin. Leipzig. Druck und Verlag von Breitkopt und Härtel, 1897, 56 էջ։

Սրանով մի տեսակ հիմք դրվեց իմ հայագիտական գրադարանին, որով ես առիթ ունեի պարծենալու։

Առանձին գրքույկներով հրատարակված ռուսերեն աշխատություններիս սկսած 1911 թվականից սիստեմատիկ կերպով արձագանքում էր «Արարատ» ամսագիրը, երբեմն նույնիսկ զետեղելով իր էջերում իմ գրվածքների ամբողջական թարգմանությունները ռուսերենից։

1913 թվականի աշնանը պիտի տեղի ունենար իմ և Գարեգին վարդապետի հանդիպումը Էջմիածնում, հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակի հոբելյանական օրերին, սակայն հիվանդությանս պատճառով ի վիճակի չեղա արձագանքել հրավերին և մեկնել Էջմիածին։

Մյուս կողմից, հաջորդ՝ 1914 թվականի մայիսին, երբ ես աշխատում էի Էջմիածնի ձեռագրատանը, Գարեգին վարդապետը բացակա էր Մայր Աթոռից, անցած լինելով արտասահման, ուր Լայպցիգում գրաղված էր իր աշխատությունների կլիշեների կարգավորման գործով. սակայն ապարդյուն, քանի որ շուտով վրա հասավ համաշխարհային պատերազմը և նա ստիպված եղավ վերադառնալ այնտեղից ձեռնունայն։

Եվ միմիայն 1915 թվականին էր, որ տեղի ունեցավ մեր, այսինքն Գարեգին վարդապետի և իմ, առերես հանդիպումը Թիֆլի-

սում, «Հովիտ» շաբաթաթերթի խմբագրատանը, որից հետո մեր բարեկամական կապը անխախտ մնաց մինչև վերջը։ Էջմիածնում եղած դեպքում ես պարտք էի համարում այցելել Գարեգին վարդապետին, հետագայում եպիսկոպոսին և արքեպիսկոպոսին, իսկ նա ևս, Թիֆլիսում եղած պահին կամ Թիֆլիսով անցնելու դեպքում, գալիս էր իմ տեսության։ Մեր մեջ տեղի ուներ և նամակագրություն հայագիտական այլևայլ խնդիրների շուրջը, նաև տպագիր աշխատությունների փոխանակում։

Կարևոր եմ համարում նշել, որ ինձ վիճակվեց աշխատակցել հենց նույն պարբերականներում, ուր ինձանից առաջ հյուրընկալվել էր Գարեգին վարդապետը։ Այդպիսիք էին. ա. «Քրիստոնեական Արևելք» ռուսերեն ժուռնալը, որ լույս էր տեսնում Պետերբուրգ-Պետրոգրադում ակադեմիկոս Ն. Մառի խմբագրությամբ տարին 3 անգամ։ Այստեղ հայերից աշխատակցում էին Ն. Ադոնցը, Հ. Օրբելին, Աշխ. Քալանթարը, ես (1913—1922), նաև էջմիածնի միաբանության անդամներից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Գարեգին Հովսեփյանց և Տիրայր Տեր-Հովհաննիսյան վարդապետներն ու Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը. բ. «Արարատ»-ը, որին մենք աշխատակցեցինք 1918 թվականին. գ. «Ազգագրական հանդես»-ը, ազգագրագետ-հնագետ Ե. Լալայանի խմբագրությամբ, ուր Գարեգին վարդապետը զետեղել էր հոդվածներ կաթողիկոսական ընտրության, օծման և թաղման ազգագրական տեսակետից նկարագիրը տալով, իսկ մենք մեր գրախոսականներով 1914—1917 թվականներին. դ. «Հովիտ» շաբաթաթերթը Եզնիկ ավագ քահանա Երզընկյանի խմբագրությամբ, նույն թվականներին. ե. «Գեղարվեստ» ալմանախը, Գարեգին Լևոնյանի խմբագրությամբ, ուր Գարեգին վարդապետը զետեղում էր իր արվեստագիտական հոդվածները, իսկ մենք հանդես եկանք մի հոդվածով վերջին (7-րդ) հատորում։

Չի կարելի չնշել նաև, որ Սովետական Հայաստանի անդրանիկ գիտական հաստատության, այն է Էջմիածնի Գիտական ինստիտուտի «Բանբեր»-ի Ա և Բ միացյալ գրքում, որ լույս տեսավ Ե. Տեր-Մինասյանի խմբագրությամբ 1922 թվականին, տեղ են գտել Գարեգին եպիսկոպոսի մի ընդարձակ հոդվածը և երկու ընդարձակ գրախոսականները։ Եվ սրանց կից զետեղված է և մեր մի հոդվածը։

Ժամանակին Գարեգին սրբազանը օժանդակեց մեր երկու մենագրության մշակման և ձևավորման գործին, որպիսիք են. ա. «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» (1928) և բ. «Սայաթ-Նովա» (1930), երկուսն էլ վրացերեն, տպված Թբիլիսիում, ուր Գարեգին սրբազանի անունը հիշված է ըստ արժանվույն։

Վերջին անգամ մենք Գարեգին սրբազանի հյուրն եղանք 1927 թվականին Էջմիածնում, ուր Նրա շուրջն էին համախմբված Գևորգ արքեպիսկոպոս Զորևքյանը (հետագայում Գևորգ Զ կաթողիկոսը), որը տպագրության էր պատրաստում իր «Քարոզգիրք»-ը, Արտակ եպիսկոպոս Սմբատյանը, որը պատրաստել էր տպագրության Էջմիածնի միաբանության անդամների գրական-գիտական գործունեության և Էջմիածնի տպարանի արտադրության տեսությունը, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը, որը «Գիվան հայոց պատմության» շարքի շարունակությունն էր մշակում և կազմում, նաև Վիեննայի Մխիթարյան Հ. Ներսես վարդապետ Ակինյանը, որը ցուցակագրում էր Էջմիածնի մատենադարանի ձեռագրերը (հայտնագործելով Զենոնի «Ճաղագս բնութեանն» երկը)։

Վերջին հանդիպումը Գարեգին սրբազանի հետ ունեցա 1933 թվականին Էջմիածնում, երբ նա պատրաստվում էր արտասահման մեկնելու իբրև հայրապետական նվիրակ (պատվիրակ)։

Առիթ չունեցա, ցավոք սրտի, Նրան տեսնելու 1945 թվականին, երբ Նա եկել էր Հայաստան կաթողիկոսական ընտրության և ապա աշխատում էր Երևանի Մատենադարանում։

Սակայն ուշի-ուշով ես հետևում էի Նրա մնայուն գործերին, որ լույս էին տեսնում Նրա չտեսնված աշխատասիրության, աշխատունակության և խոր հմտության նոր և նոր բացահայտմամբ։